ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«21» 07 2015թ.
ՊՆ/510-ԱՂ-323

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
իրավաբան Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հայրապետյան

Ի պատասխան 10.06.2015թ Ձեր թիվ 249-ի 6 գրության՝ տեղեկացնում եմ, որ 2015թ. հունվարի 1-ից մինչև հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ պաշտպանության նախարարը կատարել է հետևյալ գործուղումները՝ յուրաքանչյուր գործուղման համար հետևյալ ծախսված գումարի չափով:

Հ/հ	**Գործուղման վայրը**	**Ժամկետները**	**Ծախսված գումարը(ՀՀ դրամով)**
1.	Իտալիայի Հանրապետություն, Լիբանանի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն	08.04-18.04	**3.407.422** Ներառում է գիշերավարձ, օրապահիկ, ավիատոմսեր և Զվարթնոց օդանավակայանի VIP սրահի վճար
2.	Ռուսաստանի Դաշնություն	08.05-10.05	**812.217** Ներառում է գիշերավարձ, օրապահիկ, ավիատոմս և Զվարթնոց օդանավակայանի VIP սրահի վճար

Գործուղումների համար ծախսված գումարի չափը կարգավորվում է ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2335-Ն որոշմամբ, որով սահմանվում է ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների չափերն ու կարգը:

Միաժամանակ նաև, ի լրումն ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի ղեկավարի 08.07.2015թ. ելք ՊՆ/510-ԱՂ-301 գրության՝ հայտնում եմ, որ ս.թ. հունվարի 1-ից հունիսի 1-ն ընկած ժամականահատվածում ՀՀ պաշտպանության նախարարի հրամանների (թվով՝ 1829) և կարգադրությունների

ք.Երևան, 0044, Բագրևանդի 5, Հեռ.(+374) 10 29-44-01, Ֆաքս (+374) 10 29-43-12

(թվով՝ 2) տրամադրման պահանջը չի կարող բավարարվել՝ հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի պահանջները, քանի որ նշված հրամանները և կարգադրություններն ընդհանուր առմամբ պարունակում են զինված ուժերի գործունեության, զինվորական ծառայության կազմակերպման, զինծառայողների անձնական տվյալների վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն, որոնց հրապարակումն ինքնին կարող է հանգեցնել ծառայողական գաղտնիքի բացահայտման:

Հարգանքով՝

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

քիծ 1-ին դասի պետական խորհրդական **Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**